

# Լուցկիներ

Օգտագործելով նվազագույն թվով լուցկու հատիկներ (լուցկիներ), անհրաժեշտ է հարթության վրա կառուցել  $N$  հատ քառակուսիներ, որոնցից յուրաքանչյուրի կողմը լուցկու մեկ հատիկ է: Լուցկիները չի կարելի կոտրել կամ իրար վրա դնել: Քառակուսիների գագաթները պիտի լինեն այն կետերը, որտեղ հպվում են լուցկիների ծայրակետերը, իսկ կողմերը -լուցկիները:

Գրել ծրագիր, որը ելնելով կառուցվելիք քառակուսիների  $N$  քանակից, կհաշվի անհրաժեշտ լուցկիների միսիմալ թիվը:

## Մուտքը

Մուտքի առաջին տողում գրված է  $N$  ( $1 \leq N \leq 10^9$ ) ամբողջ թիվը:

## Ելքը

Արտածել մեկ ամբողջ թիվ -  $N$  հատ քառակուսիներ կառուցելու համար պահանջվող լուցկիների միսիմալ թիվը:

## Օրինակ

Մուտքը.

4

Ելքը.

12